<<ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ՄԱԾՁԲ-2019/19-ԵՊԲՀ>>

ք. Երևան <<04>>10 2019թ.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<Վոլիոս Նախագծային ինստիտուտ>> ՓԲԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ա. Շահինյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար:

1.2 Կատարողը պարտավորվում է իրականացնել Պատվիրատուի տարածքում գտնվող **<<Հերացի>> թիվ 1 հիվանդանոցային համալիրի Շարիմանյան փողոցի վրա գտնվող մասնաշենքի նկուղային հարկի, դալանային տեղամասով, անցումային հատվածամասի վերակառուցման աշխատանքների** նախագծի հեղինակային հսկողության ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Պահանջել Կատարողից սույն պայմանագրով սահմանված Ծառայության ամբողջական մատուցում:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Ժամանակին վճարել Պայմանագրով սահմանված գինը:

2.2.2 Կատարողին տրամադրել բոլոր անհրաժեշտ ճարտարապետաշինարարական փաստաթղթերը և շինարարության վարման մատյանը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պահանջել Պատվիրատուից ժամանակին վճարել սույն Պայմանագրով սահմանված Ծառայության գինը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Ներկայացնել Պատվիրատուին հեղինակային հսկողություն իրականացնող աշխատակիցների ցուցակ՝ նշելով հեղինակային խմբի ղեկավարին:

2.4.2 Ժամանակին լուծել նախագծին վերաբերվող՝ շինարարության ընթացքում ծագած հարցերը, համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:

2.4.3 Շինարարության վարման ընդհանուր մատյանի համապատասխան բաժնում գրանցում է նախագծային լուծումներից կատարված շեղումները՝ այդ մասին տեղյակ պահելով Պատվիրատուին:

2.4.4 Անհրաժեշտության դեպքում օրենքով սահմանված կարգով կատարել նախագծային լուծումների փոփոխություններ և լրացումներ:

2.4.5 Ժամանել կառուցվող օբյեկտ Պատվիրատուի հատուկ կանչով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

3.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4.1 Կատարողը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված Ծառայության մատուցումը սկսել պայմանագրի կնքման օրվանից:

4.2 Ծառայության մատուցման ավարտը սահմանվում է 26.10.2019թ.-ը և փաստագրվում է կողմերի միջև կնքված ավարտական ակտով:

4.3 Եթե 4.2 կետում նշված ժամկետում Կատարողը ոչ իր մեղքով ամբողջությամբ չի մատուցում Ծառայությունը, ապա երկկողմ համաձայնությամբ սահմանվում է Ծառայության մատուցման նոր ժամկետ:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Սույն պայմանագրի շրջանակներում առաջացած բոլոր վեճերը Կողմերը կփորձեն լուծել բանակցությունների միջոցով:

5.2 Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

6. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կողմերը սույն Պայմանագրի շրջանակներում գաղտնի տեղեկատվություն են համարում պայմանագրի առարկան, գինը, պայմանագրի կատարման ողջ ընթացքը և արդյունքը, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնք մի Կողմին հասանելի են դարձել մյուս Կողմի գործնականում Ծառայություններ մատուցելու կամ այցելության ընթացքում:

6.2 Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ապահովել սույն Պայմանագրի շրջանակում իրեն կամ իր աշխատակիցներին հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը, ինչպես նաև զերծ մնալ այն հրապարակելուց, անօրինական օգտագործելուց կամ ցանկացած եղանակով տարածելուց:

6.3 Կողմերը պարտավորվում են չհրապարակել, և/կամ չգովազդել Կողմերի միջև համագործակցությունը, չօգտագործել կողմերից որևէ մեկին պատկանող տարբերանշանը, ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը հրապարակումներում և/կամ կայքերում՝ առանց փոխադարձ գրավոր համաձայնության:

6.4 Գաղտնիության պահանջների խախտման դեպքում առաջացած ցանկացած վնաս ենթակա է հատուցման պահանջները խախտած կողմի կողմից:

6.5 Գաղտնիության պայմանները գործում են ոչ միայն սույն պայմանագրի գործողության ընթացքում, այլ նաև դրա դադարելուց հետո:

7. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

7.1 Սույն պայմանագրով սահմանված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից գանձել տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար սույն պայմանագրի գնի 0,05 % տոկոսի չափով:

7.2 Սույն պայմանագրով սահմանված վճարման պարտավությունը խախտելու դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից գանձել տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար սույն պայմանագրի գնի 0,05 % տոկոսի չափով:

7.3 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների ամբողջական կատարումը:

8.2 Կատարողն իրավունք չունի սույն պայմանագրով իր իրավունքները փոխանցել երրորդ անձի՝ առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված ցանկացած փոփոխություն կամ լրացում համարվում է վավեր, եթե կատարված է գրավոր և ստորագրված է Կողմերի կողմից:

8.4 Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ՊԱՏՎԻՐԱՏՈՒ>>	<<ԿԱՏԱՐՈՂ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ	**<<Վոլիոս Նախագծային ինստիտուտ>> ՓԲԸ**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**Հասցե՝ ք. Երևան, Գյուլիքեխվյան 23-43**
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ	**Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ**
Հ/Հ 11500166513800	**Հ/Հ 11500906906969**
ՀՎՀՀ 01503448	**ՀՎՀՀ 00902375**
	Էլ. հասցե՝ lmnatsakanyan.ep@gmail.com
Ռեկտոր՝ Լ. Ա. Մուրադյան	**Տնօրեն Ա. Շահինյան**
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ	Կ.Տ